

# ԳԱՂՏՆԻ ԲԱՌԱՆԱՂ

Խաղացողները բաժանվում են երկու՝ Դոնի եւ Շերիֆի թիմերի:

Դոնն ու Շերիֆը նստում են խաղասեղանի նույն կողմում:

Մյուս խաղացողները նստում են նրանց դիմաց:

Ընտրում ենք 25 պատահական բառաքարտ և դասավորում սեղանին՝ 5-ական հորիզոնական և ուղղահայաց շարքերով:



## Բանալի-քարտ

Յուրաքանչյուր խաղի համար անհրաժեշտ է մեկ բանալի-քարտ, որը գաղտնի ցույց է տալիս խաղասեղանի քարտերի դասավորությունը: Թիմի ղեկավարները պետք է պատահականության սկզբունքով ընտրեն բանալի-քարտը և տեղադրեն այն սեղմակի մեջ:

Բանալի քարտում վանդակները համապատասխանում են խաղասեղանին դրված քարտերի դասավորությանը: Կապույտ վանդակներն՝ այն բառերին, որոնք պետք է գուշակի Շերիֆի թիմը, կարմիր վանդակներն՝ այն բառերին, որոնք պետք է գուշակի Դոնի թիմը: Անգույն վանդակները



խաղաղ բնակիչներն են, իսկ սև վանդակը քիլլերն է, որին դիպչել չի կարելի (խաղը ավարտվում է):

## Մեկնարկող թիմ

Բանալի-քարտի գույնը ցույց է տալիս, թե որ թիմն է սկսում խաղը: Մեկնարկող թիմը պետք է գուշակի 9 բառ: Մյուս թիմը՝ 8 բառ: Մեկնարկող թիմի ղեկավարը տալիս է խաղի առաջին հուշումը:

## ԽԱՂԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Դրոն ու Շերիֆը գիտեն, թե ովքեր են 25 գործակալները: Թիմերի անդամները գիտեն միայն գործակալների ծածկանունները:

Թիմի ղեկավարները տալիս են մեկ բառից բաղկացած հուշումներ և որոշում են, թե որ թիմի հերթն է: Հուշումը կարող է վերաբերել խաղասեղանի՝ միանգամից մի քանի բառերին:

Օրինակ՝ ձեր պահած բառերից երկուսն են՝ ծով և մարգարիտ: Այս երկուսն էլ կարող են սև լինել: Հետևաբար, դուք կարող եք ասել **սև-2**:

Դուք կարող եք տալ հուշում միայն մեկ բառի համար (**հեծանիվ-1**), սակայն ավելի հետաքրքիր է երկու կամ ավելի բառերի համար փորձել:

Թիմի անդամները փորձում են գուշակել իրենց ղեկավարի ակնարկած բառերը: Եթե թիմի անդամը գտնում է բառը, թիմի ղեկավարը բացահայտում է բառաքարտի տեսակը: Եթե թիմի անդամը ճիշտ է գուշակել, ապա տվյալ թիմը շարունակում է գուշակել բարձրաձայնած թվին համապատասխան անգամ կամ մինչև դիպչի սխալ բառաքարտի: Այնուհետև, հերթն անցնում է մյուս թիմին: Հաղթում է այն թիմը, որն առաջինն է գուշակում իր բոլոր գործակալներին:

**Խաղի կանոնների  
ՎԻԴԵՈՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ  
կարող եք դիտել  
QR կոդը ակտիվացնելու  
միջոցով**

